ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2023 թվականի հոկտեմբերի 23-ից հոկտեմբերի 27-ը Իսպանիայի Թագավորություն (մայրաքաղաք Մադրիդ) կատարած գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը՝**

Արևհատ Պողոսյան,

Արուսյակ խաչատրյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ճանապարհային ոլորտի քաղաքականության վարչության ճանապարհային քաղաքականության բաժնի պետ,

նույն բաժնի գլխավոր մասնագետ

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**

Իսպանիայի Թագավորություն, մայրաքաղաք Մադրիդ, 2023թ. հոկտեմբերի 23-ից հոկտեմբերի 27-ը

4. **Հրավիրող կողմը.**

ԵՄ ԹԱՅԵՔՍ ծրագիր, Իսպանիայի Թագավորության ներքին գործերի նախարարության Երթևեկության գլխավոր տնօրինություն

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

ԵՄ ԹԱՅԵՔՍ ծրագրի շրջանակներում «Ճանապարհային անվտանգության աուդիտի ձեռնարկի մշակման աջակցություն» միջոցառման 2-րդ փուլով նախատեսված՝ ուսուցողական այցին մասնակցություն

6. **Քննարկված թեմաները.**

Ուսուցողական այցի հիմնական նպատակն էր ճանապարհային անվտանգության աուդիտի ձեռնարկի մշակման նպատակով Իսպանիայի փորձի ուսումնասիրումը: Այցի ընթացքում ներկայացվել են Իսպանիայում ճանապարհային անվտանգության կառավարման համակարգը, ճանապարհային աուդիտորների վերապատրաստման և որակավորման կարգը, iRAP համակարգով իրականացվող ճանապարհային անվտանգության ամբողջական գնահատման և դասակարգման մեթոդիկան, ճանապարհային անվտանգության ստուգումների իրականացում:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Ուսուցողական այցի ընթացքում հանդիպումներ են տեղի ունեցել Իսպանիայի Թագավորության ներքին գործերի նախարարության Ճանապարհային երթևեկության գլխավոր տնօրինության պաշտոնյաների և մասնագետների, CPC երթևեկության և տրանսպորտի ուսումնասիրություններ իրականացնող կազմակերպության և Մադրիդի քաղաքապետարանի ներկայացուցիչների հետ, որի ընթացքում քննարկվել են Իսպանիայում ճանապարհային անվտանգության մակարդակի բարձրացման նպատակով իրականացվող միջոցառումները, այդ թվում նաև երթևեկության մասնակիցների խոցելի խմբերի անվտանգության ապահովման ուղղությամբ և ճանապարհի վթարավտանգ հատվածներում իրականացվող միջոցառումները:

Գործուղման ընթացքում տեղի են ունեցել մի շարք այցելություններ, այդ թվում՝

- Ճանապարհային երթևեկության կազմակերպման վերահսկման էլեկտրոնային կենտրոն.
- Մադրիդի կենտրոնական փողոցները, որի ընթացքում քաղաքապետարանի ներկայացուցիչը ներկայացրել է քաղաքի կենտրոնական հատվածում ճանապարհային երթևեկության խնդիրները և իրենց կողմից տրված լուծումները.
- A-2 (Մադրիդ) և M-300 (Alcalá de Henares), ինչպես նաև N-320 Գվադալախարա-Տորելագունա ճանապարները, որի ընթացքում ճանապարհային անվտանգության մասնագետները ներկայացրել են թե ինչպես են իրականացում ավտոմոբիլային ճանապարհներին ճանապարհային անվտանգության հսկողությունը:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Հանդիպումների ընթացքում պայմանավորվածություն է ձեռք բերվել հետագա համագործակցության վերաբերյալ:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Ուսուցողական այցի շրջանակներում տեղի ունեցած հանդիպումների և քննարկումների արդյունքում ձեռք բերված գիտելիքները կօգտագործվեն ինչպես ճանապարհային անվտանգության աուդիտի ձեռնարկի մշակման շրջանակներում, այնպես էլ ճանապարհային ինժեներների կողմից ՀՀ ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային

ճանապարհներին ճանապարհային անվտանգության բարելավումների իրականացման գործընթացում:

10. Ստորագրությունը, ամսաթիվը:

01.11.2023թ.